

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Redaction «Mschak».
Տ է Է Ֆ Ե № 253.

ՄԵԼԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողաւորին 10 կոպեկով:
Տ է Է Ֆ Ե № 253.

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լաւ եւ էփան. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Հնա-
գիտական ընկերութեան երկրորդ նիստը. Կոմս
Յովհաննէս Լազարեանի մահից 100-ամեայ
տարեգարծը. Խրախուսանքի արժանի է. Նա-
պոլէոն օգնական Ֆրեյդէ, հոգաբարձու Զաքար-
ի և 17 իսկական անդամներ:

ԼԱԻ ԵՒ ԷՓԱՆ

Այն ժողովներում, որոնք տեղի ունեցան
Թիֆլիսում, շուրջակայքի միջոցով մի-
ջամբարեկան հարց: Արդեօք պէտք է
ձգտել թանգանելու մեր երկրում արդիւ-
նաբերվող իրերը, թէ հնաւել ուրիշ սկզբ-
բունքի: Պարզեցե՛ք հարցը:

Մեր երկիրը արդիւնաբերում է բուրգ,
բամբակ, պանիր, իւղ, զինի, ծխախոտ եւ
ուրիշ իրեր, որոնք ոչ միայն սպառվում են
մեր երկրի մէջ, այլ և մասամբ վաճառա-
հանվում են ուրիշ երկրներին: Եթէ թան-
գանայ այդ իրերի գինը, այն ժամանակ
նրանց արդիւնաբերողները շահ կունենան
ընդարձակելու եւ աւելի եւ զարգացնելու
իրանց արդիւնաբերութիւնը: Բուրգ ար-
տադրողը կը պահէ աւելի ոչխարներ եւ
կաղնուցանէ նրանց տեսակը: Բամբակ մշա-
կողը ձեռք կը բերէ նոր հողեր եւ ծախ-
քեր կան ռուգելու այնպիսի տեղեր, որոնք
մինչև այժմ չեն մշակվել, շնորհիւ գիւղա-
տնտեսական արդիւնքների էփանութեան:
Պանիր եւ իւղ պատրաստողները կը մե-
ծացնեն իրանց տնտեսութիւնը, կաւելաց-
նեն անասունների թիւը եւ կը սկսեն կե-
րակել նրանց աւելի բաւարար կերպով:
Նոյնը կան զինի, ծխախոտ եւ միւս գիւ-
ղատնտեսական իրեր արդիւնաբերողները:
Ուրեմն արդիւնքների թանգանալը կա-
րող է դառնալ մի մեծ խթան արդիւնա-
բործների համար՝ յայնացնելու եւ զարգաց-
նելու իրանց արհեստը: Նա կարգադրանք
այնպիսի ծախքեր, որոնք ներկայումս չեն կա-
րող տեղի ունենալ իրանց անշահաւէտու-
թեան պատճառով:

Սակայն կան երկու խոշոր հանգամանքներ,
որոնց վրա պէտք է լուրջ ուշադրութիւն
դարձնել եւ արդիւնքները անընդհատ թան-
գանելու ձգտումը յայտնի չափով զսպել:
Առաջին հանգամանքն այն է, որ թանգ
իրերը համեմատաբար աւելի քիչ սպա-
ռողներ ունեն, քան էփան առարկա-
ները: Մեր երկրի արդիւնաբերողների հա-
մար աւելի ձեռնառու պէտք է համար-
վի այն, երբ նրանք արդիւնաբերում են
այնպիսի արդիւնքներ, որոնք կարողանում
են իրանց մատչելի գներով գրաւել մաս-
նայի ուշադրութիւնը եւ բաւարարութիւն
տալ նրա պիտոյքներին: Իսկ երկրորդ
հանգամանքը, որ հանդէս է գալիս ներկայ
հարցում, այն է, որ մենք միայնակ չենք
արդիւնաբերութեան ասպարէզում, այլ
ունենք բազմաթիւ մրցակիցներ, որոնք ձգտ-
ում են խել մեկնել այն վաճառանոց-
ները, ուր մենք ոտք ենք կոխել եւ վաճա-
ռահանում ենք մեր ապրանքները: Մեր
մրցակիցները միշտ պէտք է աշխատեն
տալ սպառողին ապրանքը որքան կարելի է
լաւ տեսակի եւ էփան: Նոյն սկզբունքն
պէտք է հետեւնք եւ մենք, որպէս զի
լինելով մրցութիւնից եւ չը կորցնենք
մեր գրաւած դիրքը վաճառանոցում:

Իսկ արդիւնքներ էփանացնելու համար
կան միջոցներ, որոնց մշակութեամբ եւ
քննութեամբ պէտք է զբաղվեն մեր մաս-
նագէտները եւ արդիւնաբործները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԻ
ՆԻՍՏԸ

Շաբաթ, հոկտեմբերի 27-ին, Թիֆլիսի առա-

ջին գիմնադրայի դահլիճում կայացաւ Մօսկ-
վայի Կայսերական Հնագիտական ընկերութեան
Կովկասի ճիւղի երկրորդ նիստը, նախագահու-
թեամբ կոմսուհի Ուլարովայի: Նիստին ներ-
կայ էին պատուաւոր անդամներ՝ կառավարչա-
պետ օգնական Ֆրեյդէ, հոգաբարձու Զաքար-
ի եւ 17 իսկական անդամներ:

Նախագահը, բանալով նիստը, կարգադրեց Մեծ
Իշխան Գէորգի Միխայլովիչից ստացված հե-
տեւեալ հետազոտ. «Մերին կերպով զգացված
եմ Մօսկվայի Կայսերական Հնագիտական ըն-
կերութեան Կովկասեան ճիւղի ինձ ցոյց տուած
ուշադրութիւնը. հաճութեամբ ընդունում եմ
ճիւղի պատուաւոր անդամի կոչումը: Պէտք է
աշխատեմ ըստ չափու կարողութեան օգտա-
կար լինել ընկերութեան օգտաւէտ նպատակ-
ներին, մասնաւորապէս որ ինձ պատահում է շատ
անգամ վշտանալ, տեսնելով որ ինձ արեւելի
Կովկասի հնութեան թանկագին յիշատակա-
րանքներ փչանում են»:

Ապա պ. Ա. Երիցեան կարգադրեց իր զեկու-
ցումը «Հայերի նախնական ծանօթութիւնը
հիւսիս-արեւելեան Ռուսաստանի հետ»: Իսկա-
պէս զա ծերունի հնագէտի մի աշխատութեան
առաջարկն է, որ նա տեղեկութիւններ է
հաղորդում, թէ ինչպէս հայերը, Ռոմանեան
հարստութեան զանակաւորութիւնից առաջ, դեռ
14, 15 եւ 16-րդ դարերում առեւտրական
յարաբերութիւններ էին հաստատել ռուսների
հետ եւ նրանք զննում էին Ռուսաստան Վոլգա
գետի վրայով դէպի հիւսիս. հայերին շատ վա-
ղուց ծանօթ էր այն ճանապարհը, որով ապա-
գայում անդիպոցները Արխանգելսկի վրայով
մտան Մօսկվա Հայերը ոչ միայն առեւտրա-
կան յարաբերութիւններ էին հաստատել ռուս-
ների հետ, այլ եւ մի քանի տեղերում եկեղե-
ցիներ եւ մատուռներ էին կառուցել, ինչպէս
ցոյց են տալիս գտնված արձանագրութիւննե-
րը. Արխանգելսկի առեւտրական ճանապարհը
նոյն իսկ յայտնի էր «Արմենակի» անունով:
Մինչեւ այսօր հիւսիս-արեւելեան նահանգնե-
րում գոյութիւն ունեցող մի քանի ռուս եկե-
ղեցիների ճարտարապետական ձեւը ցոյց է տա-
լիս հայկական կամ հայ-վրացական ազ-
դեցութեան հետքը: այնպէս որ մի քանի ռուս
հնագէտներ այն կարծիքն են, թէ քրիստո-
նէութիւնը յայտնի էր Ռուսաստանում նոյն
իսկ Վաղարշապատից առաջ եւ կարող էր մտցված
լինել Կովկասից եկած գաղթականների ձեռ-
քով: Դեռ 1881-ին Թիֆլիսում կայացած հնա-
գիտական ժողովը այդ հետազոտ. հարցն ու-
սումնասիրելու առաջարկ էր տալիս Կազանի
մայր եկեղեցու աւագ քահանայ Լեւոնդի-
ցիւնի:

Անդամ բժշկապետ Պանտիւսով յայտնեց,
իբրեւ լուսաբանութիւն Երիցեանի զեկուցման,
որ հիւսիսային նահանգների մի քանի գիւղե-
րում նա տեսել է արեւելեան տիպ ունեցող
մարդկանց. իսկոյն աչքի է ընկնում, որ դրանք
կամ հայկական կամ վրացական ծագում պէտք
է ունենան, թէեւ իրանք ոչինչ չեն յիշում
իրանց ծագման մասին. այդ գիւղացիները պա-
րտավոր են նկարչութեամբ եւ մի քանի նը-
կարներ առիթ են տալիս ենթադրելու, որ
դրանք Կովկասից եկողներ են:

Դրանից յետոյ պ. Տօկաչովի կարգադրեց իր
զեկուցումը «Վրաց յիշատակարանները Բելի-
կիւնի շրջակայքում»: Զեկուցանողը 1894-ին
պ. Կուտառեկաձե հետ միասին կատարել է
իր հետազոտութիւնը եւ հաւաքել բաւական
թուով արձանագրութիւններ, որոնց հիման վրա
այդ առարկայի գրականութիւնը նոր նիւթե-
րով պէտք է հարստանայ, մասնաւորապէս որ մի
քանի վանքերի եւ եկեղեցիների մասին մին-
չեւ այսօր դեռ ոչ մի տեղեկութիւն չը կար:
Զեկուցումը բաւական երկար տևեց, այնպէս
որ, ժամանակի ուշ լինելու պատճառով, պ.
Ա. Գալանթարի զեկուցումը «Ջաքարիա աղու-
լեցու ժամանակագրութեան մասին լեռնագիւց»:
Ապա տեղի անցեալ առաջարկված նոր ան-
դամների ընտրութիւնը. գաղտնի քուէարկու-
թեամբ անդամ ընտրվեցին 13 հոգի, այն է

բժիշկներ Գուրիւ Եւ Գէորգի, պ. պ. Ա. Բա-
րախանեան, Հ. Առաքելեան, իշխան Գ. Թու-
մանեան, Գ. Վանցեան, Գոգուբալի, Վերա-
պով, Լէօնով, Լոպուխին, Գան, Բարալով եւ
գեներալ-մայոր Ալիխանով-Ավարակի:

Հետեւեալ, երրորդ նիստը, կը կայանայ շա-
բաթ օր, նոյեմբերի 3-ին, եւ կը կարգադրեն
հետեւեալ զեկուցումները՝ 1) «Ջաքարիա ա-
ղուլեցու ժամանակագրութիւնը»-Ա. Գալան-
թարի. 2) «Պարսկական տարաբան արձա-
նագրերը Թիֆլիսի միւզէի անօթների վրա»-
Միրզա Սէֆէդին-Սէֆէդի եւ 3) «Վրաց-
տանի հին պատմութիւնը ըստ բեւեռագրերի»-
Ջանալիւրու:

ԿՈՄՍ ՅՈՎԱՆՆԵՍ ԼԱԶԱՐԵԱՆԻ ՄԱՎԱՆ 100-ԱՄԵԱՑ ՏԱՐԵԴԱՐԸ

(Նամակ Մօսկվայից)

Այսօր, հոկտեմբերի 24-ին, Լազարեան ճե-
մարանը եւ նրա հետ Մօսկվայի հայ գաղութը
տօնում են մեծահռչակ Լազարեան տոնի ներ-
կայացուցիչ եւ մեծ բարերար Յովհաննէս Լա-
զարեանի մահից 100-ամեայ տարեգարծը:
Մեզանից իւրաքանչիւրիս յայտնի են Լազա-
րեան տոնի այն մեծ եւ անմոռանալի բարե-
րարութիւնները, որոնք այսօր ամբողջ հայ
ազգին յիշեցնել են տալիս եւ նրախոսգիտու-
թեան ամենաբարձր զգացմունքով լցված, ար-
տայայտում են իրանց շնորհակալիքը դէպի այդ
տոնավը:

Ինչպէս յայտնի է, Յովհաննէս Լազարեան
վախճանվեց 1801 թ.ին, Թոքնելով կառվով
մի գումար, որով 1815 թ.ին բացվեցին Լա-
զարեան ճեմարան կոչված յայտնի հաստատու-
թեան դռները, դռներ, որոնցից դուրս եկան
հայ ազգի յայտնի գործիչներ, հասարակական
եւ ազգային առաջարկիչ վրա փայլող աստղեր:
Ներկայ ժամանակներում Լազարեանների
նման բարերարներ մեր մէջ չեն երևացել եւ
հազիւ մէջ չուտով էլ երևան, այդ իսկ պատ-
ճառով այսօր Լազարեան ճեմարանը, Մօսկվա-
յի եւ Պետերբուրգի հայ գաղութները եւ նը-
րանց հետ էլ ամբողջ հայ ազգը միանում
խոնարհվում են Յովհաննէս Լազարեանի չիրմ
առաջ եւ իրանց երախտագիտութիւնների ամե-
նախորին զգացմունքը արտայայտում Հայ ազգի
համար այս յօդուհանք թող լինի մի օրինակ
եւ թող հասկացնէ մեր վաճառականական հա-
րուստ զատկարգին, որ միլիոններ դիզել եւ
անգործ թողնել չէ, որ անմահացնում է մահ-
կանացու անհատի յիշատակը, այլ լաւ նպա-
տակներով առատ բարեգործութիւն է, որ
բարձրացնում եւ հոգեւորում է նրան:

Մօսկվայի հայ գաղութը Յովհաննէս Լազա-
րեանի 100-ամեայ յօդուհանքի յիշատակին իր
վերջին ժողովում որոշեց՝ կառուցանել եկեղե-
ցու գաւթում օրիորդաց ծխական դպրոց, որի
համար բացված է կամաւոր առարկագրութիւն,
եւ, ինչպէս իմանում ենք, առատաւատաւ գու-
մարներ են նուիրում: Ահա մի գործ, որով
տեղիս գաղութը ցոյց է տալիս իր երախտիքի
զգացմունքը դէպի Յովհաննէս Լազարեանի յի-
շատակը եւ որը արժանի է ամենայն գովա-
սանքի: Սրտանց ցանկանում ենք աջողութիւն:

L. A. Z.

II

«Русскія Вѣдомости» լրագրի մէջ կարդում

ենք. «Երէկ, հոկտեմբերի 24-ին, կայացաւ Լազա-
րեան ճեմարանի տարեկան ակում եւ նրա հետ
միասին կատարվեց ճեմարանի հիմնադիր Յ.
Լազարեանի յիշատակի տօնախմբութիւնը նրա
մահից 100-ամեակի առիթով:

Առաւօտեան հայոց եկեղեցիներում կատար-
վեց ռոգեհանգիստ կոմս Բ. Լազարեանի համար:
պատարագին էր էջմիածնի եպիսկոպոս Յու-
սիկը: Ժամը 1-ին ճեմարանի ընդարձակ դահ-
լիճում կայացաւ հանդիսաւոր ժողով: Ներկա-
յութեամբ Մօսկվայի ուսումնարանական շը-
րջանի հոգաբարձուի, ճեմարանի տեսչի, ման-
կավարժական խմբի, աշակերտների եւ նրանց

ծնողների: Ակում բացվեց տետու Գ. Խալա-
թեանցի ճառով, որ նուիրված էր հիմնադրի
յիշատակին: Յովհաննէս Լազարեան մէկն է
ներկայացուցիչներից այն ցեղի, որ մեծ դեր է
խաղացել հայոց լուսաւորութեան պատմու-
թեան մէջ: Լազարեան ընտանիքի ցեղապետը
բարձր պաշտօն զենքի պարսից Նադիր Շահի
պալատում, լինելով նրա գանձապետը, իսկ նրա
մահից յետոյ, Նիքալիտա Պետրովայի թագա-
ւորութեան ժամանակ, գաղթեց իր չորս գա-
ւաղներով Պարսկաստանից Ասորիստան, ուր
այդ ժամանակ գնում էին Պարսկաստանում եւ
Թիւրքիայում հարստանարվող հայերը: Այդպէս
նա սկսեց պարսկալի առեւտրով, բայց չուտով
անցաւ Մօսկվա եւ զենք Բոգոբորսկի գաւա-
ռում Ֆրիւսով գիւղը, ուր հիմնեց մետաքսա-
գործական եւ դիպակագործական մի ընդարձակ
գործարան, բերել տալով արեւմտեան Նւրոպա-
յից եւ Ասիայից հմուտ արհեստաւորներ: Նրա
աւագ որդին՝ Յ. Լազարեան ծնվեց 1758-ին,
չուտով Թոքնել Մօսկվայի եւ տեղափոխվեց
Պետերբուրգ, ուր իր վրա դարձրեց բարձր
լըվանների ուշադրութիւնը: Լինելով բարի եւ
կալուզ բնասութեան տէր, նա շատ առա-
տաճեալ էր հայերի օգտաւէտ գործերի համար:
Նա զենք գանձապետից Ռուսա կալուածքը Պե-
տերբուրգի մօտ եւ հիմնեց իր սեփական չիթի
գործարանները, իսկ յետոյ զենք Սարգսյան-
ների ահագին կալուածքը Պերմի նահանգում,
որ բաղկացած էր լեռնային հանքագործա-
տանքից, աղի հանքերից եւ այլն:

Պետերբուրգում Յ. Լազարեան միշտ մըտ-
նում էր բարձրատեխնիկական պաշտօնեաների շը-
րջանը, մօտիկ յարաբերութիւններ ունէր Օր-
լովներ, Պոտեմկինի, Ջուբովի, Սուվորովի
հետ: Ռուսա կալուածքը, 40 վերստ հեռու Պե-
տերբուրգից, յաճախ մոտայնում էր իբրեւ զի-
ւերիւ օթեւան արքայական հիւրերի համար,
որոնք գնում էին մայրաքաղաք եւ որոնց Յ.
Լազարեանը ընդունում էր արժանաւոր չեով
եւ արեւելեան ճոխութեամբ: Այնտեղ երկու
անգամ նա ընդունեց աւստրիական կայսր
Յովսէփ II-ին եւ Ֆրանսիական թագաւոր
Կարլին: Նա վայելում էր Եկատերինէ II-ի եւ
Պաւլ I-ի բարեհաճութիւնը. վերջինս մինչեւ
անգամ յատկացնել տուեց Յ. Լազարեանի հա-
մար առանձին սենեակներ Գառնիօի պալա-
տում: Յ. Լազարեան իր բարձր դիրքից օգուտ
էր քաղում ոչ թէ անձնապէս իր համար, այլ
իր հայրենակիցների համար, որոնք հեռու էին
անհաւատների լծի տակ Պարսկաստանում եւ
Թիւրքիայում: Եկատերինէ II եւ Պաւլ II միշտ
չեղում էին նրա խորհրդին հայերին վերաբե-
րեալ բոլոր գործերի համար: Նա կազմեց
Ռուսաստանի հարաւ-արեւելեան մասը հայերով
բնակեցնելու ծրագիրը եւ կառավարութիւնը
խաղաղութիւն տուեց նրան կոչում անել
Թիւրքիայում եւ Պարսկաստանում ապրող
հայերին, առաջարկելով գաղթել Ռուսաստան:
Շնորհիւ այդ առաջարկից թանկ, հազարաւոր
հայ ընտանիքներ գաղթեցին Նոր-Նախիջեան
եւ Ռուսաստանի հարաւ-արեւելեան ուրիշ քա-
ղաքները: Հայերի համար Յովհաննէս Լազա-
րեանը հիմնել է բաւական շատ բարեգործա-
կան հիմնադրութիւններ Ռուսաստանի հարա-
ւում: 1801 թ.ի հոկտեմբերի 24-ին Յովհան-
նէս Լազարեանը վախճանվեց, Թոքնելով 200

հազար ռուբլու դրամաւոր չեւուր հայերի
մանուկների կրթութեան համար չինութիւն
կառուցանելու նպատակով: Իր այդ կարգի
բարեգործութիւնը հանգուցեալը յանձնեց իր եղբորը՝
Յովակիմ Լազարեանին, որը համարվում
Մօսկվայում հայկական դպրոց հիմնելու մըտ-
քին, ինչն իր կողմից 300 հազար ռուբլի
նուիրեց այդ գործի համար: 1815 թ.ի մայիսի
10-ին «Արմենակի» պէրէտուլի անուանված
փողոցում բացվեց մի համեմատ դպրոց 30 աղա-
ների համար: 33 տարուց յետոյ նա բարձրա-
գոյն դպրոցի փոխարկվեց Լազարեան ճեմա-
րան արեւելեան լեզուների անունով: Այժմ
այդ դպրոցը իր գոյութեան 87-ամեակին,
Թոքակային դրամների հետ միասին ունի

1,600,000 րուբլի:

Ճեմարանի գիրքերը Միլլեր ներկայացրեց աչքի ընկնող փաստերի մի տեսութիւն ձեւա-
րանի կեանքից անցեալ ուսումնական տար-
վայ ընթացքում: Ճեմարանում մտցրած է
ձեռքի աշխատանքի դաստաւութիւն եւ այս
տարվայ յունվարի 4-ին բացված է արհեստա-
նոց, ուր տարրին դասարանները աշակերտները
մեծ աջողութեամբ պարագլուս են հիւսնու-
թեամբ: Մասնագիտական դասարաններում
վերջին երկու տարին ուսանողները թիւը
25-ից հասաւ 60-ի: Կան համալսարանական
գիւյտով ունեցող ուսանողներ: Ճեմարանում
մտցրած է մանկատան իրաւունքի դասա-
տուութիւնը: Ամառը մեծ վերանորոգութիւն-
ներ եղան՝ ձեմարանը լայնացնելու համար:
Ճեմարանը այժմ ունի 322 աշակերտ, այդ
թիւում 187 գիշերօթիկներ: 25 տարվայ ըն-
թացքում գիմնազիական դասարանները վեր-
ջարած 322 հոգեւոյ ուսանողականներ եղել են
150, հայ-ուսանողականներ 142 եւ ուրիշ
գաւառութիւններից՝ 36: Նոյնպէս եւ մասնա-
գիտական դասարանները աւարտած 160 հո-
գեւոյ մեծամասնութիւնը կազմում են ուսա-
դաւան անձինք: Պետերբուրգի հայոց եկեղե-
ցիների խորհուրդը, ինչպէս ապաւինեց ձե-
մարանի հիմնադրի մահվան հարիւրամեակի,
վճարել է հիմնել 20 նոր ստիպենդիա, իւրա-
քանչիւրը 400 րուբլի, հայ հոգեւորականների
որդիների համար:

Ա. Սիւրանով կարգաց մասնագիտական դա-
սարանների հաշիւը:

Ակտը վերջանալուց յետոյ ներկայ եղողները
անցան մասնագիտական դասարանների դա-
ւիճները, ուր հիւրերին տալիս քննարկեցին թէյ,
քաղցրեղէններ եւ մրգեր: Յետոյ մասուցվեց
շամպայի եւ առաջին կենացը առաջարկեց
Մոսկվայի ուսումնարանական լըշանի հոգա-
բարձուն Թադաւոր Կայսրի կենացը: Երկրորդ
կենացը Գ. Ա. Նեկրասով առաջարկեց ձեմա-
րանի բարգաւաճման համար իմվեցին հոգա-
բարձուի եւ ուսուցչական մարմին կենացները:
Իսկ ձեմարանի տեսուչը խմեց Յուսուփ եպիս-
կոպոսի կենացը:

ԽՐԱՆՈՒՄԱՆՔԻ ԱՐԺԱՆԻ Է
(Նամակ Երեւանից)

Ի նկատի ունենալով անտեսական այն քայ-
լոված դրութիւնը, որի մէջ գտնվում է Կով-
կասը ընդհանրապէս եւ Երեւանեան նահանգը
մասնաւորապէս, մասնաւոր 1897—1899 թւե-
րի անբերրութիւնից յետոյ, արհեստները տա-
րածելու եւ առհասարակ անասնաբուծութիւնը
զարգացնելու խնդիր դարձել է հերթական եւ
նրա լուծումը համարվում է անյետաձգելի:

Ազգաբնակչութիւնը գնալով աճում է, դրա
հետ միասին նրա կարիքի, պահանջների չափը
ընդարձակվում, իսկ վարելահողերի քանակու-
թիւնը նոյնն է մնում: Մի խօսքով, այժմ երկ-
րագործութիւնը չէ կարողանում բաւարարու-
թիւն տալ ազգաբնակչութեան պահանջներին:
մասնաւոր մեր երկրի լեռնային մասերում,
ուր ժլատ բնութիւնը չէ վարձատրում բազմա-
շաքար սարեցի երկրագործ ժողովրդին: Ահա
թէ ինչու ամբողջ ուշադրութիւնը դարձրած է
անասնաբուծութեան եւ արհեստների զար-
գացման վրա: Սոստում են մասնատու չընկնե-
րում, կազմվում են ծրագրեր, մասուլը մեծ
տեղ է տալիս այդ հարցին, Կովկասի գիւղա-
տնտեսական ընկերութիւնը նոյնպէս քիչ չէ
զբաղվում այդ հարցով: Բայց գործնական քայլ
զեռն չէ արված, եթէ հաշիւում չը լինենք մի
քանի թիթեւ փորձեր, որոնք ունենցել են շատ
կարճատեւ կեանք:

Մի այսպիսի ժամանակ խրախուսանքի ար-
ժանի է միանգամայն այն գործնական քայլը,
որ արեց մի յետնկած գաւառական քաղաք—
Նոր-Բայազետը, որի մասին հաղորդված էր
«Մշակի» № 227-ում: Նոր-Բայազետը իր չըր-
ջակայ բազմաթիւ հայ գիւղերով պատկանում
է լեռնոտ գաւառների թիւին հետեւապէս՝ գր-
տնվելով կիսաշաւկան աննպաստ պայմանների
մէջ եւ անարգաւանդ մակերեսով փրա, միւս
կողմից նպաստել է անասնապահութեան իր
արտադրանքների շնորհիւ, երկրագործութեան
միջոցով չը կարողանալով հայթաթել իր ապ-
րուսը: Անասնապահութեան շնորհիւ, ի միջի
այլ մթերքների, արտահանում է նաեւ բուրգ,
սակայն ծաւալ մշակելու եւ առանց շահագոր-
ծելու: Ահա տեղացի մի տառ մարդիկ, լը-
ղանալով այդ տեղական բուրգը շահագործելու
գեղեցիկ միտքը, կազմել են մի ընկերութիւն,
թէկուզ շատ չնչին գրաւագումով, վարձել են
Զօտ գիւղացի գորգագործ մի թուրք կին, հը-

րաւորել են աշակերտահիններ եւ նախկին ծը-
խական դպրոցի բնի յարմարեցրած մի սե-
նակը յատկացնելով դրան՝ ակսել են մի գե-
ղեցիկ գործ:

Եւ այդպիսով մինչեւ որ որոշ շրջաններում
ծրագրերը կը կազմվեն, մասուլը կը շարու-
նակէ արծարծել, Գիւղատնտեսական ընկերու-
թիւնը ժողովներ կը կազմէ, Նոր-Բայազետի
մի քանի մարդկանց շնորհիւ, մի հասարակ
թրքուհու ձեռքի տակ այս րօպէին սովորում
են գորգագործութիւնը մի քանի տասնեակ
տեղացի օրիորդներ: Այս առանց աղմուկի եւ
ծրագրի գործը, որ անմիջապէս անցել է պա-
րագումնակների, ոչ միայն արժանի է խրա-
խուսանքի, այլ եւ պատիւ է բերում նրա զը-
լուխ անցնող մարդկանց: Եթէ նա աջակցու-
թիւն ստանայ եւ խրախուսանք գտնէ մեր
հասարակութեան կողմից եւ տեւողական լինի,
բաւական է մի երկու տարի, որ գորգագոր-
ծութիւնը եւ նրա հետ միասին այլ գոր-
ծուածքների արհեստը ընդհանրապէս թէ Բա-
յազետում եւ թէ գիւղերում:

Ա—Դօ

ՆԱՄԱԿ ԽՐԱՆՈՒՄԱՆՔԻ

Հայրը(բերդ, հոկտեմբերի 22-ին

Հայրը(բերդում հիմնվել է մի գրադարան,
որը նպատակ է դրել ծանօթացնել արտասա-
մանի հայ ուսանողութիւնը եւ ընդհանրապէս
հետաքրքրվող անձանց հայոց ներկայ կեանքին
վերաբերվող հարցին եւ տար լեզուով լոյս
տեսած գրքերի հետ: Գրադարանը ունի յի-
շակ նպատակով հրատարակած գրքերի մի
համեմատ թիւ, որի համար յայտնում ենք նուի-
րաւոր անձանց մեր խորին շնորհակալու-
թիւնը:

Մեր հասցէն է Heidelberg Kaiser st. № 57
A. Iohannissian.

Ի դիմաց ուսանողութեան՝
Օր. Ս. Սարգսեան
Յ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, հոկտեմբերի 28-ին, կովկասեան
Գիւղատնտեսական ընկերութեան ինտեքստ
մէջ, տեղի ունեցաւ կաթնատնտեսական եւ
անասնապահական համաժողովի վերջին նիստը:
նախագահութեամբ Ա. Գալանթարի: Նիստի
ժամանակ զեկուցումներ կարդացին պ. պ. Տի-
մոֆէեմի խոգարանութեան մասին Գուկայիսի
նահանգում, Կանցէլմարէր—Թիֆլիսի սպան-
դոտոցում վերջին տարիների ընթացքում
մորթված խոզերի քանակութեան եւ յատկու-
թեան մասին, Ա. Գալանթար—կովկասեան
ցուցահանդէսի կաթնատնտեսական բաժնում ի
ցոյց դրված կաթնային արդիւնքների արժա-
նութիւնը: Ինչպէս եւ պակասութիւնների մա-
սին, Արզումանց—ցուցահանդէս բերված կաթ-
նատնտեսական գործիքների մասին եւ պ.
Բաղդուխի—ցուցահանդէսի թոնայապահակ
բաժնի էջապահմանների ընտելութիւնից ստաց-
ված հետեւանքների մասին: Պ. Տիմոֆէեմի
վիճակագրական թիւեր առաջ բերելով Գու-
կայիսում մշակվող եգիպտացորենի քանակու-
թեան վերաբերմամբ, ցոյց տուեց, որ տեղա-
կան ազգաբնակչութիւնը իւրաքանչիւր տարի
մօտ 5 միլիոն պուդ աւելորդ եգիպտացորեն
է ստանում, որը եւ նա ստիպված է արտահա-
նել շատ անգամ էժան եւ անձեռնադու գինե-
րով: Այս պատճառով զեկուցանողը առաջա-
րկում էր հետեւել Ամերիկայի օրինակին, որ
եգիպտացորենը արտահանում է ոչ պարկե-
րով, այլ «տնեքով», այսինքն պահում է խո-
զեր, ուտեցնում նրանց եգիպտացորենի աւե-
րողք քանակութիւնը եւ ապա վաճառում նը-
րանց, օրպէս խոզի միս: Եգիպտացորենի այս
կերպ շահագործումը, զեկուցանողի առեւթով,
շատ աւելի ձեռնտու է, քան եգիպտացորենի
վաճառումը: Բացի սրանից զեկուցանողը ա-
ռաջարկեց համաժողովին դիմել երկրագործու-
թեան միջնորդութեանը եւ խնդրել նրանից
միջոցներ, որոնցով ազգաբնակչութիւնը կարո-
ղանայ ազնուաբնել խոզերի տեղական տեսա-
կը, որովհետեւ խոզերի ազնուաբնած տե-
սակը աւելի մեծ աշուղութեամբ կարողա-
նում է եգիպտացորենի փոխարինել մի, քան
տեղական աւետակը: Պ. Կանցէլմարի զեկու-
ցեց, որ այն տարիներում, երբ մեր երկրի
անտառներում խոզերի կերտուրն առատ է
լինում, Թիֆլիս բերվում եւ մորթվում են
մօտ 25,000 խոզեր, այն ինչ կերակրի պակաս
տարիներում: Թիֆլիսում մորթվում են ոչ ա-
ւելի քան 14,000 խոզեր: Պ. Գալանթար հա-
ղորդեց, որ չլէյքարական պանրի պատրաս-
տութիւնը մեր երկրում հետզհետէ տարած-
վում է եւ ստացված պանրը իր արժանաւո-

րութիւններով շատ աւելի բարձր է, քան
Ռուսաստանի ներքին նահանգներում պա-
րաստվածները, թէպէտեւ պանրագործութեան
տեխնիկան դեռ եւս շատ աշխատանք պէտք է
գործ դնէ՝ իր արդիւնքները աւելի միատեսակ
եւ աւելի կառաւարկագործված դուրս բերելու
համար: Ընդհակառակը՝ Անդրկովկասում պա-
րաստված իւղը դեռ եւս իր յատկութեամբ
չէ կարող մրցել եւրոպական եւ Ռուսաստանի
ներքին նահանգներում պատրաստվածների
հետ: Սակայն աչքի առաջ ունենալով, որ Ան-
դրկովկասը, իբրեւ ալպեան երկիր, շատ լաւ
կերակուր է մատակարարում անասուններին,
որից եւ կարված է զիսաւորապէս իւղի յատ-
կութիւնը, պէտք է յոյս ունենալ, որ իւղա-
գործութիւնը հետզհետէ կառաւարկագործվելով,
նշանաւոր տեղ կը բռնէ համաշխարհային շու-
կայում:

Մեզ հաղորդում են, որ կիրակի, ամսիս
28-ին, ցուցահանդէսի թատրոնում կայացաւ
պ. Կարա-Մուրզայի երկրորդ հանրամատչելի
համերգը, ժողովրդական շորերով: Մրադիրը
հարուստ էր եւ լաւ անցաւ շնորհիւ պ. Կա-
րա-Մուրզայի եռանդուն աշխատանքի, խումբը
շատ լաւ երգեց մանուսնը «Է-պո-լէ-է» ժո-
ղովրդական պարերգը Solo-ներին լաւ էր պ.
Տէր-Առաքելեանը: Համերգը վերջացաւ աղ-
գային պարերով:

Հոկտեմբերի 27-ին եւ 28-ին կովկասեան
ցուցահանդէսում, երկրագործական գործիքնե-
րի ընդի մասնաժողովի անդամների ներկա-
յութեամբ, տեղի ունեցաւ պ. Մամաջանեանի
եւ Տէր-Ջաւարեանի կայսի մեքենաների
քննութիւնը: Այս երկու մեքենաների առանձ-
նապատկութիւնը, որով նրանք զանազանվում
են եւրոպական կայսիներից, այն է, որ նրանք
հատկիւնը ծղնոտից բաժանելու հետ միասին
ծղնոտը դարձնում են դարձան, մի բան, որ
չեն անում եւրոպական մեքենաները: Յայտ-
նի է, որ դարձան մեր երկրի անասնապահու-
թեան մէջ մեծ նշանակութիւն ունի եւ շատ տե-
ղերում գիւղացիք ձեռք պահում են խոյր
անասուններին բացառապէս դարձանով միայն
Պ. Մամաջանեանի մեքենան աշուղութեամբ
կայսիւրը յետոյ, ցորենի հատիկները բաժա-
նում էր դարձանից եւ հաւաքում նրանց ա-
ռանձին-առանձին տեղերում: Դարձանը ստաց-
վում էր մանր, փափուկ եւ բոլորովին պե-
տական: Նոյնը կատարում էր եւ Տէր-Ջաւա-
րեանի մեքենան, բայց վերջինը չունէր թղիշ-
գործիչ, ուստի եւ դարձանը ցորենից չէր բա-
ժանում: Այս երկու մեքենաների եւս իրանց
յատկութիւններով արժանի են մեր գիւղա-
տնտեսների եւ գիւղացիների ուշադրութեան:
Կայսի մեքենաները ցուցահանդէսում գոր-
ծում էին էլէքտրական մօտորի ուժով: Բայց,
նայելով յարմարութեանը, նրանք կարող են
գործել ձեռք ջրի եւ շոգիի ոյժով: Պ. Մա-
մաջանեանի մեքենան արժէ 500 րուբլի, իսկ
պ. Տէր-Ջաւարեանինը 1,500 րուբլի:

Մեզ հաղորդում են, որ կիրակի, հոկտեմբերի
28-ին, Աւստրական ժողովրդական թատրոնում
տրվեց երրորդ ներկայացումը: Ուղագին է.
Տէր-Գրիգորեանի «Բարեգործութեան դիմակի»
տակը դրաման, լաւ անսամբլով եւ աշուղու-
թեամբ: Մեծ եռանդով տարաւ տ. Մելիքեանը
իր դերը: Նրա խաղը շատ ազդու էր: Բնորոշ
էր եւ պ. Սարաթիւսեանի Կեղեքեանը: Մենք
շատ ենք տեսել պ. Յարութիւնեանի խաղը,
բայց այդ օրը մի առանձին ոգեւորութեամբ էր
խաղում: Մնացած դերակատարները, փոքր
բացառութեամբ, իրանց մտածած եւ խելացի
խաղով ներկայացման ամբողջութիւնը պահ-
պանեցին: Դանիլը ծայրէ ի ծայր լինէր էր:

Մեզ հաղորդում են, որ հինգշաբթի, նոյնեմ-
բերի 1-ին, երեկոյեան ժամի 8-ին, ռուսաց
շտաբի շինութեան մէջ կը կայանայ կառարչա-
պետի օգնական Ֆրիզերի նախագահութեամբ
կայսերական Աշխարհադրական ընկերութեան
կովկասեան ճիւղի հրապարակական նիստը, ուր
ի միջի այլոց, Հ. Առաքելեան կը կարգայ մի
զեկուցում «Բարիակալութիւնը, իբրեւ Պարս-
կաստանի ապագայ կրօնը» վերնագրով:

Պետերբուրգի եւ Մոսկվայի պարբերական
մամուլի մէջ լուրեր էին տարածված, թէ Պե-
տերբուրգի քաղաքային ինքնավարութեան րէ-
ֆորմների հետ միասին հիմնական փոփոխու-
թիւնների են ենթարկվելու նաեւ զէմալովի
հիմնարկութիւնները այն նահանգներում, ուր
նրանք մտցրված են: Այժմ «Рус. Вѣд.» լրա-
գրին հետագրում են Պետերբուրգից, թէ լու-

րերը զէմալովի հիմնարկութիւնները րէֆորմ-
ների ենթարկելու մասին հիշող չեն: Ներքին
գործերի մինիստրութեան մէջ այդպիսի հարց
չէ բարձրացել եւ ոչ մի մասնագործով այդ
հարցի վերաբերմամբ չէ կազմված:

Անդրկովկասի նահանգական եւ շրջանային
անասնաբուծների ժողովներում, որոնք տեղի
ունեցան հոկտեմբերի 26-ին եւ 27-ին, ընը-
վում էր ժամատարից հիւանդացած անասուն-
ների նոր, աւելի նպատակայարմար միջոց-
ներով ոչնչացնելու հարցը: Միւսու տարվայ
փորձը ցոյց տուեց, որ անասուններին ոչնչ-
չացնելու այժմեան եղանակը նպատակին չէ
հասնում:

Մօտ օրերում Պետերբուրգ եկած Փրան-
սիական գինեգործների ներկայացուցիչները,
ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրա-
գրից, —խոյր գումարների պայմաններին են
կապել Ռուսաստանի գինեւորման հետ,
որով վերջինները պարտաւորվում են 1902
թւին Ֆրանսիա ուղարկել մեծ քանակութեամբ
կրիմի, Բէսսարաբիայի, Կարխէթի եւ Դոնի
գինիներ:

«Торж.-Пр. Газета» հաղորդում է, թէ արն-
տեսագէտների ժողովը առաջարկում է բոլոր
համալսարանների ուսանողներին մի թէմա,
որի վերաբերմամբ աշուղ շարագործութիւնը գոր-
դը կը ստանայ 3000 րուբլի վարձատրութիւն:
Առաջարկված թէման հետեւեալն է. «Գիւղա-
ցիական գործի պատմութիւնը ճորտութիւնից
ազատվելուց յետոյ: Շարագործութիւնների ներ-
կայացնելու ժամանակամիջոցը նշանակված է
1904 թւի փետրվարի 19-ին:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Անցեալները
Նիւգէտի գիւղի (Нюгет) նախկին տանտուէր՝
Մօլա-Բէհրու-Թէմիր-Շահ-օղլին մի հարուստ
թուրքի հետ գնում է Թալարի եւ Ջիլի գիւ-
ղերը աղողելու գնելու համար: Ժամապարհին
նրանց հանդիպում է չորս մարդուց բաղկա-
ցած փոքրիկ աւազակախումբ: Աւազակները
ճանապարհորդներից փող են պահանջում, բայց
սրանք չեն տալիս. ծագում է կռիւ, որի մի-
ջոցին աւազակները սպանում են Մօլա-Բէհ-
րուին եւ փախչում են: Թէ սպանվածը եւ
թէ նրա ուղեկից հարուստ թուրքը անգն են
լինում, աղա պատճառով էլ անկարող են լի-
նում իրանց անձը պաշտպանելու համար գէնք
գործածել: Շնորհիւ Ղուբայի գաւառակի պրիս-
տաւ պ. Ջէնջերիէի, շուտով ձեռքաւարում
են բոլոր չորս աւազակներին, որոնք հիմա
Ղուբայի բանտում են:

ՍԱՄԱԼԱՐ գիւղից (Էլմիսանի գաւառ) մեզ
գրում են. «Իւրաքանչիւր տարի այս կողմե-
րում տեղի էին ունենում ժողովրդականութիւն-
ների, կռիւներ, հրդեհվում էին մարազների եւ
խոտի գէղեր եւ այլն: Վերջին տարիներս աւե-
նացաւ դրանց վրա մի այլ շարագործութիւն—
աղջիկ կամ կին փախցնելու: Շնորհիւ նախկին
անպէտք գաւառականների, այդպիսի դէպքերը աւելի
լայն ծաւալ ստացան ժողովրդի մէջ: Մի գիւ-
ղացի կամեցում է ամուսնանալ իր համազու-
ղացուհու հետ (երկուսն էլ այրի), սակայն կինը
մի այլ տղամարդի եր ուղղում գնալ: Առաջին
տղամարդը վախենալով, որ իր հակառակորդը
կարող է յաղթանակել, իր համախոհներով
գնում է դաշտ՝ յիշեալ կնոջը բաւրակ ժող-
վելու տեղից ստիպմամբ նստեցնում են ձի եւ
փախցնում Սուրմալուի կողմերը: Անցեալ օ-
րերն էլ մեր հարեւան Մուղանուղ գիւղում
մի հարուստի խոտի դէզն են կրակում:

ԲԱՄՈՒՄԻՑ մեզ գրում են. «1899 թւին
Պուկիւնեան ամուսնալուծութիւնների ժամանակ,
մեր քաղաքային վարչութիւնը որոշել էր Պուչ-
կինի անունով կառուցանել մի տուն, որտեղ
պէտք է լինէին էժանագին ներկայացուցիչներ
եւ դասախօսութիւններ ժողովրդի համար:
Բայց մեր քաղաքային վարչութիւնը մինչեւ
օրս էլ դեռ ոչ մի գործնական քայլ չէ արել
այդ օգտաւէտ հիմնարկութիւնը գործի բերե-
լու համար, որտեղ նորերս էլ դարձեալ մեր
քաղաքային վարչութիւնը իր նիստերից մէ-
կում որոշեց դիմել ուր հարկն է թոյլտու-
թիւն խնդրելու, նոյն նպատակով կառուցա-
նելու մի տուն, այս անգամ ի յիշատակ ռու-
սաց՝ Բաթումի տիրապետութեան 25-ամեայ
տարեդարձի, որ լրանում է եկող 1902 թւին:
Տեսնենք թէ այս անգամ որքան եռանդուն կը
կպնեն գործին մեր քաղաքի հայրերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բ. Դրանը, ըստ երեւոյթի, ապանում են, բացի Փրանսիայից, եւ ուրիշ պետութիւններ, Բալթիկական կառավարութիւնը չափազանց դժգոհ է Թիւրքիայից: Նրա գծողութեան պատճառը հետեւեալ փաստն է, որ տեղի է ունեցել մօտ օրերումս Կ. Պօլսում: Մի խառնուրդ, կամեցաւ պաշտպանել իր կեանքը, սպանել է իր վրա յարձակող ալբանացուն: Թիւրքական իշխանութիւնները, համարելով սպանութիւնը դիտաւորեալ, պահանջեցին, որ յանցաւորը դատուի Թիւրքական օրէնքներով, համաձայն գոյութիւն ունեցող դաշնագրի: Բայց իտալական զեապանութիւնը մերժեց Թիւրքական իշխանութիւնների պահանջը եւ առաջարկեց դատել յանցաւորին իտալական օրէնքով: Շատ հաւանական է, —ասում է «Matin» լրագիրը, որ Թիւրք-իտալական այս տարաձայնութեան հետ կապ ունի Հոմից ստացված տեղեկութիւնը, որով հաղորդվում էր, թէ իտալական միջերկրական նաւատորմի մի նաւաւորման ուղևորվում է գէպի Թիւրքական ջրերը: Բացի սրանից խաղաղ չէ եւ Սաւան կղզին: Երկուսը են կրում, որ յունական նաւատորմի առաջիկայ այցելութիւնը այդ կղզուն առիթ կը տայ նրա ազգաբնակչութեանը ցոյցեր անելու Թիւրքիայի դէմ, որից նա կամենում է բաժանվել եւ միանալ Յունաստանի հետ:

—«Journal des Débats» ապագրել է հետեւեալ հետազոտումը Կ. Պօլսից: Աւստրիացի շատ չէ անհանգստանում նրա համար, որ Փրանսիական նաւատորմը կերեւալ Միտլէնա կղզու առաջ, որովհետեւ այդ կղզու բնակիչները մեծամասնութիւնը յոյներ են: Բայց նրան ուղղակի զարհուրեցնում է այն միտքը, թէ Փրանսիական զօրք կարող է մուտք գործել երկրի ներքո, ուստի նա հրամայել է տուել, որքան կարելի է, չուտուի վերջացնելու ամբողջութեան յիշուցիւնը: Դարդանելի մուտքի, Սալոնիկի եւ Զիւրիխի առաջ, Ամին տեղ այժմ ստորջրեայ ականներ են դրված եւ այն տեղերում, ուր երկուսը կայ, թէ Փրանսիական զօրքերը կարող են ափ իջնել, Թիւրքական զօրքերը պատերազմական դիրքի մէջ են դրված, որպէս զի արգելք դառնան Փրանսիացիների դիտաւորութեանը: Ամբողջ Թիւրքիայում նկատվում է թշնամական զգացմունքներ: Փրանսիացիների դէմ, այնպէս որ երկուսը են կրում, որ Փրանսիական հիւպատոսները կարող են Թիւրք խուժանի յարձակումներ ենթարկվել երկրի ներքին նահանգներում:

—«Neue Freie Presse» ասում է, թէ Թիւրքական ստացված տեղեկութիւններով, պարսկական մայրաքաղաքում եւ մի քանի նահանգներում վերջին ժամանակներու տեղի ունեցած անկարգութիւնների յայտնի պատճառն այն էր, որ Շահին, իր դէպքի մերժումը կատարած ճանապարհորդութեան ազդեցութեան տակ, մտադրութիւն ունի լուրջ ընթացքներ մտնել Պարսկաստանում: Բայց Շահի ցանկութեանը հակառակվում է պահպանողական կուսակցութիւնը, որի անդամները կազմում են Պարսկաստանի բոլոր պատմականները: 90%-ը թէ արքունական պալատում եւ թէ պետութեան վարչական հաստատութիւնների մէջ: Այս կուսակցութիւնն էր, որ անկարգութիւններ առաջացրեց՝ կամենալով այս միջոցով ազդել Շահի վրա եւ ստիպել նրան հրաժարվելու մտադրված ընթացքներից:

—Անգլիական լրագիրները համակրանքով են խօսում Փրանսիական կառավարութեան ընդառն ընթացքի մասին Թիւրքիայի վերաբերմամբ: Համարեա բոլորն էլ հաւանութիւն են տալիս Փրանսիական կառավարութեան վճռին եւ արդարացի են գտնում նրա վարածուկը: «Times» այս առիթով գրում է. «Չէ կարելի գործանալ այն ըմբին, որ Փրանսիական կառավարութիւնը վճռել է վերջ դնել մի դրութեան, որ չէր համապատասխանում նրա արժանապատեւութեան եւ շահերին: Փրանսիւրքական տարաձայնութիւնների երկար ժամանակամիջոցում Դելիլասէ չէր դադարում ապացոյցներ տալ իր արտասովոր զգուշութեան եւ չղահայեցողութեան, որոնք նրա քաղաքականութեան յատկանշաններն են: Բայց այդ յատկութիւններին նա միացրեց եւ մի ուրիշ յատկութիւն, որ պակաս անհրաժեշտ չէ մի պետական գործիչի համար, — դա անողորմ վճռականութիւնն էր՝ պաշտպանելու իր երկրի արժանապատեւութիւնը եւ ստիպելու յարգել նրա իրաւացի պահանջները»:

—Այն օրինադրերից մէկը, որ աւտորիական միջնորդութիւնը պատրաստվում է առաջարկել ընդհանրապէս, վերաբերում է մամուլի գործերին: Այդ օրինադրով մտադրութիւն կայ թիւթեւեցնել պարբերական մամուլի վիճակը: Ինչպէս յայտնի է, լրագիրների հատուկ վաճառումը Աւստրիայում արգելված է: Հատուկ վաճառումը թոյլ է տուած միայն երկաթուղիների կայարաններում: Ուրիշ տեղերում վաճառուի համար խնդրաքննութիւնները ստիպված են դիմել իշխանութիւններին եւ խնդրել յատուկ թուղթերի մասին անգամ ամեն մի տեղի, համար: Նոր օրէնքով վերացվում է այդ արգելքը: Բացի դրանից կը փոխվի նաեւ կօնֆիսկացիային վերաբերեալ օրէնքը:

—Պրագայի արքեպիսկոպոսը հրաժարվեց օրինել Փրանս-Յուսկի կայսրի անունը կրող նոր կամուրջը, որի բաշման հանդէսը տեղի ունեցաւ անցեալ կիրակի օրը: Հրաժարվելու պատճառն այն էր, որ արքեպիսկոպոսը չը կամեցաւ ենթարկվել կառավարութեան պահանջին եւ արտասանել իր ճառի կէտը գերմաներէն:

ՄԵԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

27 հոկտեմբերի

ՌԱՖԱՐՈՎՍԿԻ, Հիւսիսային Մանջուրիան խուճուկների աւազակախմբերից եւ նախկին զինուորներից առկա առ սակաւ մաքրվելը շարունակվում է: Սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 22-ը անձնատուր եղան նախկին զինուորներ Գիրինի մօտ, Տիւ-Իւ-Անի հրամանատարութեան տակ, 327 մարդ, Ուվանդ-պօի հրամանատարութեան տակ—75, Նուան-չնտի մօտ, Տէսիկարի հրամանատարութեամբ—250 մարդ, Նինգուտի մօտ—146 զինուորներ: Բէյյուտալիկայի եւ Բայանտու-պուի շրջանում—183 մարդ, ընդամենը 941 մարդ: Օգոստոսին եւ սեպտեմբերին Բէյյուտալիկայի մօտ անձնատուր եղան 300 մարդիկ, Գիրինի մօտ—344 մարդ, որոնք առաջ Չանգոչիկի հրամանատարութեան տակ էին, ընդամենը Լիւզանիսի եւ Շիւեանիկայի զօրքերի դէմ զինեալ Կաուլբարսի յունիսեան արշաւանքից յետոյ անձնատուր եղան 1585 մարդիկ, բացի դրանից, արշաւանքի ժամանակ զինեալ Կաուլբարսի անձնատուր եղան 631 մարդիկ, Չանգոչիկի հրամանատարութեան տակ, որոնք ժամանակաւորապէս ընդունվեցին մեր ծառայութեան մէջ: Ընդամենը հիւսիսային Մանջուրիայում մեղ անձնատուր եղան 2216 մարդիկ, որոնցից 1824 հոգի յանձնվեցին ձեռն-ցիւնին աւելի վտառահիւսների չինական ոստիկանութեան մէջ ընդունելու, 121 հոգի ուղարկվեցին հայրենիք անդորրմային Չինաստան, 615 հոգի ուղարկվեցին հայրենիք Մանջուրիայի տաճարներում, 156 հոգի ցրվեցին Սուալունեան շրջանում: Լիւզանիսիի նախկին զօրքերը յանձնեցին 228 հրացաններ: Գործերի զուտութիւնը հիւսիսային Մանջուրիայում այնքան հանգստացուցիչ է, որ կռիւ մղելը մնացած խուճուկների դէմ հնարաւոր է համարված յանձնել զիւսուորապէս չինական ոստիկանութեան, իսկ մեր զօրքերը հրաւիրել այն դէպքերում, երբ չինական ոստիկանութիւնը անզօր կը հանդիսանայ եւ երբ դրա մասին կը միջնորդեն չինական իշխանութիւնները:

ԲԵՐԼԻՆ: Մի քանի լրագիրներ նկատում են, որ «Koelnische Zeitung» լրագրի Պետերբուրգից ստացած տեղեկութեանը՝ Ռուսաստանի եւ Փրանսիայի միջեւ գործողութեան մասին ընթացիկ վիճակը անզօր կը հանդիսանայ եւ Թիւրքիայի եւրոպական նահանգներում՝ այստեղի տեղեկակ յիշաններում մեծ կասկածով են վերաբերվում: Նոյնպէս հաւանական չէ եւ այն տեղեկութիւնը, որ իբր թէ Ռուսաստանը եւ Փրանսիան կը հրաւիրեն զաշնագիր տնորադրող ուրիշ պետութիւններին, միանալ նրանց ընդհանուր գործողութիւններին: Մինչեւ այժմ ոչ միայն որ եւ չէր գտնւում չէ եղել այդ կօնֆէրէնցիան գումարելու վերաբերմամբ, այլ եւ նշաններ, որ այդպիսի գործում կարելի լինէր որոշելու ժամանակում առաջնաւոր:

Կ. ՊՈԼԻՍ: Այսօր առաւօտ մեծ վիզիրը վարածանվեց:

ՍԻՐԱ: Փրանսիական նաւատորմը, որ չորեքշաբթի խաբիսի գցեց այստեղի նաւահանգստում, բազմապեղ էր Կալեարիի գիւղիցիայի չորս նաւերից, այդ նաւատորմը, ամուսի պաշար անելով, նորից ձանապարհ ընկաւ հինգերորդի:

ԼՈՆԴՈՆ: Շանգայից «Standard» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, Շանգոյի նոր նահանգապետ նշանակված է Չանգ-Սու-Չուն, ցորենի փոխադրութեան կովտարը Տայվանում:

ՊԱՐԻՉ: Պատգամաւորների ժողովը ի նկատի ունենալով երկաթուղիական ծառայողների աշխատութեան վերաբերմամբ արած հարցապնդումը, պատգամաւորների ժողովը, 330 ձայների մեծամասնութեամբ 116-ի դէմ, որոշում կայացրեց, որի մէջ վտահոթութիւն է յայտնում կառավարութեանը: Վճռված է, որ հինգերորդի կը ձեւով օրինադրեմ յօգուտ այդ ծառայողների:

Իւան-Շիկայի յաջորդ նշանակված է մի անյայտ անձնաւորութիւն, որը մինչեւ այժմ վաւարում էր մի չնչին, թէպէտեւ եկամուտ բերող

պաշտօն, ներքին Շանգոյի քաղաքներից մէկում:

Վան-Վէն-Շաօ, Լիւսիսային Մանջուրիայի օրպէս չինական կառավարութեան լրագրող, այժմ 74 տարեկան է: Նրա լսողութիւնը ծանր է, նա երբէք պետական մարդ կամ գիւղամաս չէր համարվում, եւ, ըստ երեւոյթի, ժամանակաւորապէս է նշանակվել այդ պաշտօնում:

ՊԱՐԻՉ: Կալեար հեռագրով հաղորդեց Լա-նէսանին ափ իջնելու եւ մաքսային հիմնարկութիւնները գրաւելու մանրամասնութիւնները: Միտլէնա նաւահանգստում, Նա բաւականացաւ միայն մէկ զօրաբաժին ափ իջնելու, որին վտահոթութեամբ ընդունեցին բոլոր բնակիչները: Կ. Պօլսից ստացված վերջին հեռագրում հաղորդվում է, որ Բապտո մի շարք օրդէրներ ստացաւ Թիւրքաց մաքսատների համար, որոնք կազմում են Լօրանդօին տրուվի պարտքի ամբողջ գումարը եւ որը պէտք է ամսէ ամս վճարվի, սկսած 1902 թիւ փետրվարի 1-ից մինչեւ 1903 թիւ մայիսի 1-ը:

28 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը Բարձրագոյն բարեհաճեց դադարեցնել պատերազմական գործիւնը Կլանտունեան շրջանում:

ԼՈՆԴՈՆ: Պատասխանելով Հիւզօլուսի ի պատիւ միջնորդների առաջարկած կենացին, լորդ Սոյթիլիի ասեց, որ այժմեան գործիւնը աւելի դժուար է, քան մի քանի տարի առաջ, բայց ամենը կատարեալ հիմք ունենք մեղ շնորհաւորելու ընդհանուր խաղաղութիւնը, խօսելով ընդհանրապէս, խախտված չէ, իրաւ է, Միջերկրական ծովում վերջին շարաթիւնը մի թիւթեւ ամպ երեւաց, բայց նա ցրվեց: Դա նոյնպէս կոշոր հետեւանք է, յիշուտն տարի առաջ այդպիսի անցքը այդքան չնչին հետեւանքներ չէր ունենայ: Իսկապէս լուրջ անցքեր չը կան, եթէ չը հաշու պատերազմը հարաւային Աֆրիկայում, Բայց այդ պատերազմին եւս չը պէտք է յոռետես տրամադրութիւններ չնշել, որովհետեւ նա ոչ մի հիմք չունի: Մենք այդ պատերազմը կաւարտելու: Անըդհատ աշխուրթիւնները աշող վախճանին կը հասնեն: Պատերազմը վախճանը այնքան մօտ չէ, ինչպէս մենք յոյս ունէինք, բայց կրած երկուսները գլխաւորապէս պէտք է վերագրել այն հանգամանքին, որ մենք չը հասկացանք պատերազմի իսկական բնաւորութիւնը: Դա սովորական պատերազմ չէ. եւրոպական պատերազմների ժամանակ շատ յաճախ պատահում էր, որ պարտիզանական կոիւր աւելի երկար էր շարունակվում, քան կարճվում էր: Նա պէտք է կրկնեն, որ մենք իւրաքանչիւր չաբաթ էական աշխուրթիւն ենք ունենում: Մեր քաղաքականութիւնը մնում է անփոփոխ: Մեր ամենալաւ ցանկութիւնն այն է, որ այն շրջաններում, ուր այժմ շարունակվում է պատերազմը, Թագաւորին խաղաղութիւնը եւ ազատութիւնը, եւ անհրաժեշտ ըստ կարելոյն չուտուի սկսեն վաշել ինքնավարութեան բարիքները: Սակայն բռնիների անկախութիւնը հակառակ է մեր ապահովութեան. անգլիական ազգը վճռեց, որ այդ սարսափելի պատերազմը այլ եւս երբէք չը պէտք է վերանորոգվի: մենք պէտք է հետաքննեք այն վտանգը իսկական պատճառը, որ գոյութիւն ունի մեր կայսրութեան այդ անկիւնում: Անգլիայի կենսական շահերը պահանջում են, որ մենք աշխուրթեամբ վերջացնեք այդ պատերազմը»:

29 հոկտեմբերի

ԻՐԿՈՒՍՏԻ: Այսօր վերադարձաւ նահանգապետ Սոյլէրիւս: Բարձրագոյն բարեհաճութեամբ նահանգը կառավարող գնդապետ իշխան Վոլոսոսկի ճանապարհ է ընկնում Պետերբուրգ: Կիւնի, Կիւնի նահանգում մտնելու է նոր կանոնադրութիւն գիւղական-բժշկական մասի համար: Ներկայ տարում կը բացվեն հինգ բուժարաններ, եկող յունվարին կը բացվեն վեց նոր բուժարաններ:

ՍԱՐԱՍՈՎ: Կայսերական տեխնիկական բնկերութեան տեղական բաժանմունքը նախագծում է կազմել 1903 թիւն տեխնիկական-տնայնագործական-արդիւնաբերական ցուցահանդէս: Սկզբնական աշխատանքները եւ յատկապէս մշակութիւնը յանձնված են առանձին յանձնատնոյի:

ՊԱՐԻՉ: Թիւրքաց արտաքին գործերի միւնիստը հաղորդեց մի նամակով, որ գրված է նրա մէջ յիշված կայսերական իրադէի հիման վրա, որ Ի. Դուռը, կանոնաւոր ճանաչելով մեր առաջին պահանջները, եւ ընդունելով Փրանսիայի նոր պահանջները, 1) ընդունում է մեր այժմեան դպրոցների օրինական գոյութիւնը եւ ազատում է նրանց մաքսային հարկերից, գոր-

ծաղրվող դաշնագրիները եւ պայմանագրերի համաձայն: 2) ընդունում է մեր այժմեան հիւսնադանոցային եւ կրօնական հիմնարկութիւնների օրինական գոյութիւնը, ազատելով նրանց հողային հարկից եւ մաքսահարկերից, գոյութիւն ունեցող դաշնագրիները եւ պայմանագրերի հիման վրա: 3) թոյլատրում է կարկաստել կամ մեծացնել դպրոցական, հիւանդանոցային կամ կրօնական հիմնարկութիւնները, որոնք վնասով կամ քանդվել են 1894 եւ 1896 թիւերին Ասիական Թիւրքիայում եւ Կ. Պօլսում: տեղի ունեցած անցքերի ժամանակ: 4) պարտաւորվում է անպայման թոյլատրված համարել հիմնարկութիւնը, հիմնադրութիւնը, ընդարձակումը, կառուցումը կամ կարկատումը, որ մենք կը կամենանք սկսել ապագայում, եթէ, ծանուցում ստանալով մեր դիտաւորութեան մասին, կայսերական կառավարութիւնը առաւարկութիւններ չի ներկայացնի կէս տարվա ընթացքում: 5) հաստատում է քաղաքական պատրիարքի ընտրութիւնը: Բացի դրանից, Փրանսիական զեապանութեանը Կ. Պօլսում ներկայացվեցին զօրեւմէններ, որոնք ապացուցանում են, որ ձեռնարկված են ի կատար ածելու վերոյիշեալ կէտերը: Այդ ի նկատի առնելով, Դելիլասէ տեղեկացրեց Բ. Դրան, որ Փրանսիան վերանորոգում է դիպլոմատիական յարաբերութիւնները եւ որ ծովապետ Կալեարին հէջը նոր ուղարկված է հրաման հեռանալ Միտլէնայից:

Կ. ՊՈԼԻՍ: Տեղեկութիւնը այն բանի մօտ է, որ իբր թէ Բ. Դուռը դիմել է Անգլիային խնդրելով պաշտպանել Փոքր-Ասիան հնարաւոր յարձակումներից Փրանսիայի կողմից եւ դրանով կատարել 1878 թիւ պայմանագիրը՝ այստեղ հիմքից զուրկ է համարվում:

ՊԱՐԻՉ: Շատ հաւանական է, որ ծովապետ Կալեարի նաւատորմը Միտլէնայից կերթայ Սիրա: Դեպքում Կօնստան չուտով Կ. Պօլս կը վերադառնայ:

ԲԱՐՍԵԼՈՆԱ: Քաղաքային ընտրութիւնների ժամանակ մեծ անկարգութիւններ տեղի ունեցան, ընտրողական շատ շրջաններում արիւնհեղութիւններ եղան: կատալոնցիները եւ հանրապետականները միմեանց վրա ընկնելով, ներ էին արձակում: այժմ հաշուում են մէկ սպանված եւ 40 վիրաւորվածներ:

ԱԹԷՆԻ: Ատտակոսում պայթեց մի մեծ թընդանթ անգլիական իրէյսլիի վրա, որ ռազմափորձեր էր անում նաւահանգստից դուրս: Մէկ օֆիցէր եւ վեց թընդանթանքներ սպանվեցին, հրամանատարը եւ 13 նաւաստիներ ծանր վիրաւորվեցին:

ՆԻՇՆԻ-ՆՈՎՊՈՐՈՒ: Նաւագնացութեան ընկերութեան բաժանմունքի ժողովում վճռվեց միջնորդել եկող յունվարին Նիժնի-Նովոքոթում նաւագնացական համաժողով կազմելու մասին Վոլգայի աւազանին վերաբերեալ հարցերը լուծելու համար:

ԽՈՐԱԳԻՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրապարակներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻԿԱ-ԱՄԱՐԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՈՐ ՀԻՄԱՆԿԱՆՈՑ

Բ. ՆԱԿԱՆԱՐԳԵԱՆԻ

(Կուկիւ, Վօրոնցօֆի արձանի հանդէպ)

«մեծ օր, բացի կիւրակի օրերից»

ԱՌԱՋՈՑՆԵՐԸ

- Բ. Ա. Նաւաստիգիւմ—1—12 ժ. վիրաւորութեան, վնասական (փփրիս) և միգրացիա, հիւանդ.
 - Մ. Մ. Զիւլիպուհի—9—10 ժ. աչքի, ներքին և անարգային է.
 - Կ. Ի. Գիւլիի—12—1 ժ. ականջի, քթի և կողմի հիւանդ.
 - Չ. Ի. Բարաւառեւանց—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.
 - Մ. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երեխայից հ.
 - Ե. Բ. Ն. Ուստաւորեւով—5—6 ժ. վիրաւորութեան և մորթում.
 - Մ. Ն. Շալապուհի—6—7 ժ. ներքային (եղկաւորութիւն), վնաս, և մորթում.
 - Պ. Մ. Թարխանեանց—7—7 1/2 ժ. ներքին և երեխայից հ.
 - Բ. Ա. Նաւաստիգիւմ—7 1/2—8 ժ. 4 ժամ 50 կ. չարտերը ձրիս համախորհրդի (կօնփրիս) և օպերացիայի համար առանձին.
 - Օ. Տ. Առաւելեանց—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.
- Հիւանդանոցի վերահսկող

Բժշկական ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Մասնակի տակից գույքը եկաւ եւ վաճառուած է
Թիֆլիսի Կենտրոնական գրաքանութեան
ՇԻՐԱՎԱՆՁԱՂԻԻ
Ն Ա Մ Ո Ւ Ս
վեպի երկրորդ տպագրութիւնը, Գ 1 ր.
Նոյն գրատանը վաճառուած են Շիրվանշա-
ղիի եւ հետեւեալ աշխատութիւնները.—«Ար-
սէն Դիմաքան» (սակաւթիւ) գ. 1 ր. 50
կ., «Ճաւազարը» գ. 50 կ., «Ջուր յոյսեր»
վեպ—գ. 1 ր., «Վէպիկներ» գ. 40 կ. եւ
«Կրակ» գ. 30 կ. Գրաքանութեանը եւ գու-
մարով գնողներին զիջուած է իրենւ.
Դիմել՝ Թիֆլիս, ԵՊ Կենտրոնական ԿՆԻՋ-
նայ ԹՈՐԳՎԱՆ.
(Ե.) 8—10

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ
ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
«Մարենի լեզու», Ղ. Աղայանի ա. տարի,
այլընտրանք—25 կ.
«Մարենի լեզու» Ղ. Աղայանի, Բ. տարի 30 կ.
«Մարենի լեզու», դասագիրք կրտսեր դասա-
րանների համար, Լ. Սարգսեանի եւ Կ.
Կուրկեանի 70 կ.
«Մարենի լեզու» (պատկերներով), ա. տարի,
Արարաշեանի 30 կ.
«Եկեղեցական պատմութիւն» (մատենագիրնե-
րից), Օրբելի 1 ր.
«Կրօնի դասագիրք», Սանակ քան. Սանակեա-
նի, ա. Բ. գ. տարի 70 կ.
«Համառոտ քարոզներ», Ն. Բ. Ղամադեանի 1 ր.
«Քրիստո. վարդապետ», » » 20 կ.
«Տարրական երկրաչափութիւն», Թարգմ. Հ.-
Ջալալեանի 1 ր. 20 կ.
«Տարրական ֆիզիկա», Պետերբուրգի հայ ուս-
տպար. 60 կ.
«Ընտիր հատուածներ», Է. Բ. Նազարեանի 1 ր.
«Նախապետական եւ հայրենի աշխարհ», Ս.
Մանգինեանի 60 կ.
«Դասագիրք ֆրանս. լեզուի» (ուս.-ֆր. 60 կ.
«Տրամաբանութիւն» Ի. Յարութիւնեանի 1 ր.
Դիմել՝ Թիֆլիս. Կնիժնի մագազին «Գու-
տենբերգ», Գ. Գալստյան, Լորիս-Մելիքո-
ւեան, № 11. 2—3

Ա.Տ.Ա.Մ.Ն.Ա.ԲՈՅԺ-ԿԻՆ
Ս. Ա. ԲԱՐԳ
Ընդունուած է ատամներ եւ բերանի հիւանդու-
թիւն ունեցողներին, զննուած է արհեստական ա-
տամներ, հանուած է ատամները, պլոմբուած է եւ
այլն: Ընդունելութիւնը 8-ից մինչեւ 2 ժամ առա-
ւոտեան եւ 4-ից մինչեւ 7 ժամը երեկոյան:
Պուշկինեան փողոց, № 21, տուն Կուրկեա-
նովի 9—15

Գեանքերու դիմաց ԲՈՅՈՒՄԻՆԻ
Մեծ արկղիկը 5 րուբլի, փոք-
րը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:

ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժողովրդական եւ արարչական համար,
ոչնչացնում է թեփուր Դուրս եւ եկել նաեւ
բոլորովին նոր միջոց
ԶՈՒՅՈՒՄԻՆԻ
Երեւոյն ջնջութիւն եւ արդիւնաւորութիւն
տալու համար, արհեստանոց է արեւի պատ-
հառած սեւութիւնը, մուկները, տալիս է կա-
շուկն ջնջութիւն եւ արդիւնաւորութիւն: Այդ
գնեքը չափաւոր են. մեծ որուակը, արկղի-
կի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ.
Մասնուած են բոլոր պարֆիւմերական եւ
ղեղատաշտական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Գեանքերու դիմաց,
Պուշկինեան փողոց, ա. № 15, բնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում՝ Սրեանեան հրապարակ
եւ նրա բաժանմունքում, Միքայելեան փո-
ղոց եւ Բագուում. նաեւ Միքայելեան կա-
մուրջի վրա, Պաշտի եւ Արեւմտեան դե-
ղատներում: Ստորագրողներին պա-
տուէրները կատարվում են անմիջապէս՝
պատուով. 89—100

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՆՈՂՈՒԹԻՒՆ
յարմարեցած նորութեան համար
Դիմել է 15 կ.
Դիմել՝ Արմաւիր (Եւր. Օբլ.), Բեգենտու Տի-
մոնու Սաանյան. 3—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, նոյեմբերի 1-ին
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը
մասնակցութեամբ ա. Սիրանոյշի
Կը ներկայացնէ առաջին անգամ Ֆուլդի կոմէ-
դիան
Ուրուականների Ետեւից
4 արար. Թարգմ. Ս. Արտեմեանի
Սկիզբը ժամը ճիշդ 8-ին
Տեղերի գները իջեցրած են
Տոմարները ծախվում են միմիայն ժողովա-
րանի շփոթարի մօտ
1—2

Լ ո յ ա ա ե ս ա ն
Մ ԶՄԳԵԱՆԻ
«Մոցի», Սեդանի», «Պատի» եւ
«Արմանի Կալենդար»
1902 ՕՐԱՅՈՅՑՆԵՐԸ
Աւելի չքեղացրած եւ հարստացրած
«ՊԱՏԻՆԸ» 40 40 Գ.
Միւսները ամբողջական գներով
Հասցէ՝ Թիֆլիս, Մակար Չաչկեան
(Ե. Կ.) 4—15

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեւոյն, հոկտեմբերի 30-ին, աւագների
խորհրդի կարգադրութեան համաձայն, Կը լինի
Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Ե Ր Ե Կ Ո Յ
(28 եւ 30) 2—2

Ա.Տ.Ա.Մ.Ն.Ա.ԲՈՅԺ
Լեռն Կարապետեան
Դարձանուած է ատամներ, շինուած է պլոմբներ,
ոսկե պատկեր արժատների վրա նստացնելու
եւ կեղծ ատամներ ոսկե եւ կաշուէ պատ-
մաններով վրա:
Ընդունում է հիւանդներ ժամը 9-ից առա-
ւոտեան մինչեւ ժամը 7 երեկոյան:
Սոյալական պատկերով վրա, տուն Միքայել-
եանի № 6. 9—30

ԲԵԼԱՔԱՆ ԳԻՒՂՈՒՄ (Ջաւաթ. չրջան)
Ծախվում են ընտիր տեսակի պողպատ. ծաւեր,
1—2 տարեկան Պայմանների մասին կարելի է
տեղեկանալ Խորհրդի քարվաստարում, № 62,
Միւսա Աւագեանից: 4—4

Ծայանում եւ ի գիտութիւն հասարակութեան,
որ Դիֆթոյա փողոցի վրա, պալատական
այգուն կից գտնվող

Վ Ի Կ Տ Օ Ր Ի Ա
նոսերները վերանորոգված, նոր կահաւորված
եւ ամեն կերպ յարմարեցրած են իջեւանողնե-
րի համար:
6—10 Օհան Գեանդարեան

ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ
տեղեկագիր ժողովածուի I եւ II մասերը
(Հաղորատ, Սանահին, Դսեղ, Սեւորդեանց Ջոր)
հրատարակված է. Իւրաքանչիւր հատորը բաղ-
կացած է 24 պատկերներից: Գինը 6 ր. 50 կ.:
I եւ II մասերը միասին գնողները վճարում
են 11 րուբլի:
Ցանկացողները միշտ կարող են տեսնել այդ
պատկերները «Գուտենբերգ» գրաքանութեան
ցանկում, Լորիս-Մելիքեան փողոց: 2—3

ԵՐԿՐԱԶԱՓ-ԻՆՏԵՆԻՐ
Ս. ԲԱ.ՆԱ.ԹՐԵԱՆ
Ընդունում է երկրաչափական եւ հարթաչա-
փական (нивелировочная) եւ այլ տեսակի գեօ-
դէզիական աշխատութիւնների ջուր մասաւոր
բարելու, կանաչիկաշաղկաւ, ոռոգման, ճանիւ-
ների ցանցաւորում, անտառների բարելա-
րութեան, լեռնային գործի, ճանապարհների
եւ փողոցների շինութեան եւ կանոնաւորու-
թեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուած-
ների կարգաւորութեան յատկապէս վրա գը-
նահատական (оценочный сбор) տուրքի հա-
մար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը,
քաղաքային յատկապէս հաստատուող օրէն-
դական կարգով եւ այլն:
ԲԱՅՈՒ, «Դիֆթոյա» նոսերները հիւրանոց-
կաւ Թիֆլիս՝ Ավագեան փողոց, Շահուդա-
րեանի տուն, № 59, բակում:
17—100

ԲԺԻՇԿ ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍԱՐ
Ցանձնված է Թիֆլիսում Կենտրոնական գրաքանութեանը,
ուր հրաւիրվում են գիմել ցանկացողները
Ն Ո Ր Ե Ր Ս Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ն
«Մարմնամարզութիւն» (25 պատկերով)—գինն է 20 կօպ., «Մարմնամարզութեան աղիւսակ-
պատկերներ»—գ. 10 կ., «Ժառանգականութիւն եւ դատարարականութիւն»—գ. 15 կ. եւ «Ման-
կավարժական համառոտ գրոյցներ»—գ. 15 կ. նաեւ միւս աշխատութիւնները.—«Առողջ հոգին
առողջ մարմնի մէջ»—գ. 10 կ., «Գեղձախտ—գոյտուխտ»—գ. 10 կ., «Ո՞վ է յանցաւորը»—գ.
15 կ., «Սիֆիլիս»—10 կօպ., «Մեր ներքերը»—10 կ. եւ «Վեներական ախտեր»—գ. 5 կօպ.:
Գրաքանութեանը եւ գումարով գնողներին զիջուած է իրենւ:
Դիմել՝ ԵՊ Թիֆլիս, ԵՊ Կենտրոնական ԿՆԻՋնայ ԹՈՐԳՎԱՆ.
5—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՂԲ. ՄԻԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՅ
Թիֆլիսի բաժանմունք Բագուում: Պարապետ:
Պատիւ ունենէ յայտնելու, որ մեր խանութում վաճառվում են ամեն տեսակ պատրաստի
պիտակեղէն կանանց եւ տղամարդկանց, ֆուֆայկներ, շալկներ, նասկներ, ձեռնոցներ,
միտաւի կիշոնկաներ սեղանի համար Նոյնպէս բաւթաներ, զայթաններ սեփական գործարա-
նում պատրաստված, կանանց գլխի տարքեր, այսինքն չիբիւաներ, հայիւներ, մետաքսէ աղ-
լուխներ եւ այլն:
ԳՆԵՐԸ ԶԱՓԱՌՈՐ ԵՒ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ
10—10

ԹԵՅԻ ԱՌԵԻՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Վ. ՎԻՍՈՅԿԻ ԵՒ ԸՆԿ.
== ՄՕՍԿՎԱՅԻՄ ==
Բաժանմունքը Թիֆլիսում—ՄԵՏԻՆ, Երկաթվաճառների փողոց, տէլեֆոն № 432.
Նորին Մեծութիւն Պարսից Շահի պալատի մատակարարներ:
Հիմնական դրամագումարն է 6,000,000:
Առեւտրի տարեկան շրջանառութիւնը—20,000,000:
Շնորհիւ մեր Թէյերի բարձր յատկութեան, որոնք առանձնապէս նշանաւոր են ի-
րանց զօրեղ հոտով, ջնջուլ համով եւ մուգ գոյնով, մեր առեւ-
տրական տունը գրաւել է Եւրոպայում առաջին տեղերից մէկը
իր ծախած Թէյի բնականութեամբ:
Մեր խանութներում, որոնք գտնվում են Մոսկվայում եւ
Օդէսայում, սեփական շինութիւնների մէջ, պարապում են ա-
ւելի քան 1500 հոգի:
Մեր առեւտրական տան Թէյերը ծախվում են Ռուսաստա-
նի բոլոր լաւագոյն խանութներում:
Մեր Թէյերն առնելու ժամանակ խնդրում ենք պ.պ. գնող-
ներին ուշադրութիւն դարձնել մեր առեւտրական նշանի ճշ-
գումբն վրա, —նաւ.—որ հաստատված է կառավարութիւնից եւ պահանջել Վիսոյկու-
թեան նաւի նշանով:
Ընկերութեան Վարչութիւնը գտնվում է Մոսկվայում,
բաժանմունքները՝ Օդէսայում, Վարչապետ, Բաժանում Դոնի վրա, Սկաւորինբուր-
գում, Պարիսում, Թիֆլիսում, Բրազիլում, Վիսոյում եւ Սիմֆերոպոլում:
Ընկերութեան հասցէն թէ Մոսկվայի եւ թէ բաժանմունքների համար—Товарищество
чайной торговли В. Високий и Ко.
4—10

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ
СІУ
ФАБР. С. СІУ И К. МОСКВА.

Կ Օ Ն Ֆ Ե Տ Ի Ե Ն Շ Օ Կ Օ Ղ Վ Ե Ի
Գ Ո Ր Ժ Վ Ր Ա Ն
„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍԻՄ
Առաջարկում է Թարմ կարամէլ մրգե-
ղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա,
զէֆիր եւ այլն:
Պատուէրներով գիմել գործարան. Պալ-
լովսկայա փողոց, սեփական տուն, տէլե-
ֆոն № 362.
Սեփական գործարանական խանութը
գտնվում է Մեյլանում, եղբ. Հէջուբեանների
տանը, տէլեֆոն № 772.
Մեր ապրանքները ծախվում են բոլոր
կոյունիական խանութներում:
Բագուի եւ Բագուի գաւառի համար
ներկայացուցիչ է Նիկ. Սամարեանց, Մի-
քայելեան փող., տ. Աշունեանի:
78—100